№ 28 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

№ 28 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15

Փետրվարի 12-ին, երկարատև, տանջալից հիւանդութիւնից յետոյ հանդիստ կնքեց իր ժահկանացուն

ԵՂԻՍԱԲԷԹ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆԸ,

որի մասին հանգուցեալի ամուսինը՝ Մարկոս Եսայեան Դօլուխանեանը զաւակների հետ միասին՝ խոր վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին։ Ամփոփը շաբաթ օրը՝ փետրվարի 14-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը բնակարանից (Սէրգիեվսկի փողոց № 9) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին տեղի կունենայ կիրակի, փետրվարի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին։ Թաղումը կը կատարվի Խոջիվանքի գերեզմանատանը։

(շ. կ.) 1—2

Նինա Բօգդանեան և Գէորգ Միքայէլեան Դօլուխանեանները յայտնում են իրանց անկեղծ երախտագիտութիւնը և սրտագին շնորհակալութիւնը ինչպէս իրանց անմոռաց որդի

ՍԱԹԻ

բարեկամներին և ընկերներին, այնպէս էլ այն բոլոր ազգականներին և ծանօթներին, որոնք այնքան համակրութեամբ արձագանք տուին իրանց անսահման վշտին։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուշադրութեան կէտերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գեղեցիկ գործ. Մատենագրութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի ծանօթութիւններ մարտանաւերի մասին։

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐԸ

Պօրտ-Արթուր և Եալու գետ—ահա այն երկու կէտը, որոնք կենտրօնացրել են իրանց վրա քաղաքական աշխարհի լրված ուշադրութիւնը։ Այդ երկու կէտերը դեռ երկար ժամանակ կը լինեն առանձին հետաքրքրութեան առարկայ, մինչև որ պատերազմական գործողութիւնները կը փոխադրեն ընդհարումների բեմը դէպի ուրիշ տեղեր։

Վերջին հեռագիրները ցոյց են տալիս, որ Պօրտ-Արթուրի թէ բերդը և թէ զինուորական նաւատորմը ասեն կերպ աշխատում են արգելել եապօնացիներին ծանենալու նաւահանգստին և կարողացել են հարուածներ հասցնել եապօնական զինուորական մի քանի նաւերի, որոնք խիզախօրէն առաջ էին մղվել դէպի Պօրտ-Արթուրի նաւահանգիստը։

Ինչով պէտք է բացատրել այն յամառութիւնը, որով եապօնական նաւատորմը շրջում է Պօրտ-Արթուրի առջև և ժամանակ առ ժամանակ յարձակումներ է գործում ռուսաց նաւահանգստի և զինուորական նաւերի վրա։ Չէ կարելի կարծել, որ եապօնացիները յոյս ունեն իրանց յարձակումներով գրաւել Պօրտ-Արթուրը, որովհետև այդ բերդը թէ շատ լաւ ամրացրված է և թէ ունի բաւականաչափ զինուորական այժ երկար ժամանակ դիմադրելու համար։ Պէտք է ենթադրել, որ եապօնացիները յանձն են առել զոհաբերութիւններ անել ուրիշ նպատակների հասնելու համար։ Այդ նպատակները կարող են լինել հետևեալները։ Անդադար պաշարման մէջ պահելով Պօրտ-Արթուրը, եապօնացիները իրա-

մից, թեթև պատռուածքների դէմ ձեռք առնված է և մի ուրիշ ազդեցիկ միջոց։ Զրահաւորի այն մասը, որ գտնվում է ամբողջապէս ջրի մէջ և ջրից էլ մի քիչ բարձր, եթէ կարելի է այսպէս ասել, զրահաւորի կեղևը կըրկնակի է, այսինքն այնպէս, ինչպէս, օրինակի համար, իրար մէջ անցված ձուի երկու կեղև։ Ահա այդ երկու կեղևների մէջ գտնվող տարածութիւնը լցված է մի այնպիսի նիւթով, որը ջրի ազդեցութեան տակ ուռչում է։ Երբ զրահաւորի կեղևի վրա մի փոքրիկ բացուածք է գոյանում, այն ժամանակ կրկնակի կեղևների մէջ գտնվող նիւթը՝ ներս խուժող ջրից անմիջապէս տարածվում, ուռչում է և խցում բացուածքը։

Առաջին կարգի մի զրահաւոր, ինչպէս, օրինակ, «Ռեսվիզան»՝ Եւրօպայում պատրաստվելով՝ արժէ 13 միլիոն ռուբլուց էլ մի քիչ թանգ։ Իսկ նուազ ճարտարարուեստ երկրներում, բնականաբար շատ աւելի թանգ։

Զրահաւորները ընդհանրապէս զինված են լինում 4 խոշոր թնդանօթներով, որոնց բերանի տրամագիծը հասնում է 200—320 հազարերորդամէտրի, այսինքն մինչև մէկ ոտնաչափ։ Այդ թնդանօթների արձակած ռումբերը ունեն 6—7 պուդ ծանրութիւն։ Դրա համար էլ ռազմամթերքի շտեմարանը՝ թնդանօթների հետ հաղորդակցութեան դրված է էլէկտրական և ջրաբաշխական սիստեմով շարժվող փոքրիկ վերելակներով՝ ասասանէօռներով՝ որոնք զրահեայ խողովակների միջոցով այդ խոշոր ռումբերը շտեմարանից բարձրացնում են դէպի թնդանօթի բերանը։ Ո՛չ միայն ռումբերի բարձրացնելը, այլ և թնդանօթները լեցնելը, նշան առնելը, և մի շարք ուրիշ նոյնատեսակ գործողութիւններ կատարվում են էլէկտրական գործիքներով, որոնց փչանալու կամ խանգարվելու դէպքում միայն փոխարինում են ձեռական գործիքները։ 6—7 պուդանոց ռումբերի բունը գլանաձև է, իսկ նրանց ծայրը վերջանում է կոնաձև, սուր, որպէս զի թշնամու զրահաւորները կարելի լինի հեշտութեամբ ծակել։

Այդ թնդանօթների իւրաքանչիւր հարուածը արժէ 3000 ռուբլի և իւրաքանչիւր թնդանօթ 100 հարուածի համար սահմանված է միայն։ Հարիւր հարուածից աւելին վտանգաւոր է նկատվում, որովհետև թնդանօթները կարող են չը դիմանալ, ճաքել։ Ահա այս պատճառով էլ այդ թնդանօթների հարուածը խնայվում է, նա գործ է ածվում կարևոր պարագաների մէջ միայն. և ընդհանրապէս թնդանօթների թիւը 4-ից չէ անցնում։ Մեծ թնդանօթներին փոխարինում են միջակներն ու փոքրերը, որոնց գործ ածելը աւելի հեշտ է, և որոնցից մի զրահաւոր կարող է մինչև 35—40 հատ ունենալ։ Թեթև թնդանօթները դեռեղված են լինում յաճախ, կամրջակների վրա և կայմերի միջին մասերում։ Նրանք ցերեկվայ կռիւներում բնաւ դեր չունեն, այլ գործ են ածվում գիշերը, մանաւանդ ականանաւերի դէմ։ Եապօնական զրահաւորների խոշոր թնդանօթները պաշտպանված են զրահապատ աշտարակներով (tourelle). ռուսականների միջակ՝ 152 հազարերորդամէտր տրամագիծ ունեցող թնդանօթները մի և նոյն եղանակով պատսպարված են։ Իսկ և՛ ռուսական և եապօնական միջակ թնդանօթների մեծ մասը թշնամու հարուածներից պաշտպանված են երկու ձևով։ Կամ նրանցից իւրաքանչիւրը շրջապատված է զրա-

պէս փակում են այդ նաւահանգիստը և թոյլ չեն տալիս, որ ուրիշ ծովեզրեայ տեղերից ներժուծվեն Պօրտ-Արթուր զանազան մթերքներ, իսկ միւս կողմից զբաղեցնելով ռուսաց զինուորական նաւերը նաւահանգստի պաշտպանութեամբ՝ կարողութիւն են ստանում ազատ կերպով զօրք իջեցնելու կօրէական ծովափերի զանազան կէտերում։

Առաջին նպատակի իրագործումը, ըստ երևոյթին, զգալի վնասներ չէ կարող հասցնել ռուսաց զօրաբանակներին, որովհետև, ինչպէս հաղորդում են Մանջուրիայից ստացված պաշտօնական տեղեկութիւնները, Պօրտ-Արթուրում և մանջուրական երկաթուղու զանազան կէտերում մթերքների բաւականաչափ պաշարներ կան և նրանք լրացվում են նորանոր ապրանքներով, որոնք ուղարկվում են երկաթուղու գնացքներով։ Ինչ վերաբերում է եապօնական երկրորդ նպատակին, նա մի որոշ չափով իրագործվում է, որովհետև Վլադիվոստոկի և հարաւային Ովկիանոսի ջրերում գտնվող ռուսաց երկու ուժեղ նաւատորմերը դեռ չեն մօտեցել Կորէայի ջրերին։ Սակայն շուտով այդ նաւատորմերը պէտք է հանդէս գան իրանց այժով և ճնշեն այն ազատութիւնը, որով մինչև այժմ գործում էր եապօնական նաւատորմը։

Եալու գետը, որ կազմում է Կորէայի հիւսիսային սահմանը, ներկայումս դեռ սառած է, ուստի թոյլ է տալիս ազատ կերպով շարժվել մարդկանց և սայլերին։ Նոյնպէս դեռ սառած է ցամաքի հողը և յարմար թէ երթևեկութեան և թէ իրերի փոխադրութեան համար, ուստի թէ ռուսական և թէ եապօնական զօրքերը աշխատում են օգտվել այդ հանգամանքից, որքան կարելի է արագ կերպով առաջ գնալու, որպէս զի յետոյ մեծ դժուարութիւնների մէջ չընկնեն։ Բայց ձմեռը արդէն վերջանում է, ձիւները և սառուցները սկսում են արդէն հալվել և շուտով թէ գետերը կը շարժվեն ու կը վարարվեն և թէ ցամաքի ընդարձակ տարածութիւններ կը դառնան անանցանելի

երկար ժամանակով, մինչև որ այնքան կը չորանան, որ նորից կը վերականգնէ հաղորդակցութիւնը երկրի զանազան մասերում։ Հասկանալի է որ հակառակորդներից իւրաքանչիւրը աշխատում է կարելիին չափ աւելի յարմարութիւններ և ժամանակ վաստակել իր համար, որպէս զի ապագայում կարողանայ աւելի լաւ դիմադրել և աւելի զգալի հարուածներ հասցնել հակառակորդին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԳՈՐԾ

Մի գեղեցիկ գործ, որի վրա մենք մեծ հաճոյքով հրաւիրում ենք բոլոր հայ գրողների, թարգմանիչների և հրատարակիչների ուշադրութիւնը։ Այդ գեղեցիկ, կասենք նոյն իսկ հսկայական գործը, գալիս է մեզ Վենետիկից, Մխիթարեան Միաբանութիւնից և գալիս է լրացնելու մի կարևոր պակաս, որ այնքան սաստիկ կերպով զգացվում էր մեր գրականութեան մէջ։

Նոր մատենագիտութիւն—ահա ինչ է աւետում մեզ «Բազմավէպի» փետրվարի համարը. մի աշխատութիւն, որ պէտք է լինի հայկական մտքի հայելի, որ պէտք է պարունակէ ցուցակը բոլոր այն հայ գրքերի, որոնք լոյս են տեսնված 1512 թուից, այսինքն առաջին հայ գրքի տպագրութիւնից, մինչև այսօր։ Ուրեմն Նոր մատենագիտութիւնը պէտք է տայ մեզ 392 տարվայ (1512—1904) հայ մատենագրութեան լիակատար ցուցակը։

Մինչ իրաւունք չունենք ասելու, որ սա կը լինի մի գեղեցիկ և հսկայական գործ։ Ճիշդ է, սա բոլորովին նոր գործ չէ, որովհետև տարիներ առաջ (1883-ին), Միաբանութիւնը հրատարակեց «Հայկական Մատենագիտութիւն» անունով մի գիրք, բայց այն ինչ որ այժմ է հրատարակվում իբրև այդ աշխատութեան երկրորդ տպագրութիւն հիմովին բարեփոխված է, սրբագրված, ճոխացած, հետևաբար ներկայանում է բոլորովին մի նոր աշխատութիւն, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ 1883-ից ի վեր քսանամեայ շրջանում, ինչպիսի զարգացումն և բարեշրջումն է կրել հայ մատենագիտութիւնը։

տեսակ դրամներ կատարվում են էլէկտրական գործիքներով, որոնց փչանալու կամ խանգարվելու դէպքում միայն փոխարինում են ձեռական գործիքները։ 6—7 պուդանոց ռումբերի բունը գլանաձև է, իսկ նրանց ծայրը վերջանում է կոնաձև, սուր, որպէս զի թշնամու զրահաւորները կարելի լինի հեշտութեամբ ծակել։

Այդ թնդանօթների իւրաքանչիւր հարուածը արժէ 3000 ռուբլի և իւրաքանչիւր թնդանօթ 100 հարուածի համար սահմանված է միայն։ Հարիւր հարուածից աւելին վտանգաւոր է նկատվում, որովհետև թնդանօթները կարող են չը դիմանալ, ճաքել։ Ահա այս պատճառով էլ այդ թնդանօթների հարուածը խնայվում է, նա գործ է ածվում կարևոր պարագաների մէջ միայն. և ընդհանրապէս թնդանօթների թիւը 4-ից չէ անցնում։ Մեծ թնդանօթներին փոխարինում են միջակներն ու փոքրերը, որոնց գործ ածելը աւելի հեշտ է, և որոնցից մի զրահաւոր կարող է մինչև 35—40 հատ ունենալ։ Թեթև թնդանօթները դեռեղված են լինում յաճախ, կամրջակների վրա և կայմերի միջին մասերում։ Նրանք ցերեկվայ կռիւներում բնաւ դեր չունեն, այլ գործ են ածվում գիշերը, մանաւանդ ականանաւերի դէմ։ Եապօնական զրահաւորների խոշոր թնդանօթները պաշտպանված են զրահապատ աշտարակներով (tourelle). ռուսականների միջակ՝ 152 հազարերորդամէտր տրամագիծ ունեցող թնդանօթները մի և նոյն եղանակով պատսպարված են։ Իսկ և՛ ռուսական և եապօնական միջակ թնդանօթների մեծ մասը թշնամու հարուածներից պաշտպանված են երկու ձևով։ Կամ նրանցից իւրաքանչիւրը շրջապատված է զրա-

հայ գօտիով, և կամ եթէ իւրաքանչիւր թնդանօթ չէ մեկուսացված, նրանցից մի քանիսը հաւաքված են մի զրահապատ, ճշմարիտ, փոքրիկ ամրոցի մէջ։ Առաջ, երբ թնդանօթների պաշտպանութեան այդ եղանակները չը կային, ռումբի մի հարուած բաւական էր լինում անպէտք դարձնելու մի քանի թնդանօթ միաժամանակ։

Այս բոլոր բացատրութիւններից յետոյ, աւելորդ է անշուշտ շեշտել, որ մի նաւատորմի ամենամեծ ուժը կազմող միութիւնը՝ զրահաւորն է, և նրան է վիճակված առաջնակարգ դերը ճակատամարտներում։ Հասկանալի է նոյնպէս, որ մի զրահաւոր նոյնքան արագաշարժ չը լինի, որքան մի կրէյսէր կամ մի ականանաւ, որովհետև նա վերջիններից անհամեմատ աւելի ծանր է ու բեռնաւորված։ Մի զրահաւորի երկարութիւնը լինում է ընդհանրապէս 110—130 մէտր կամ 50—60 սաժէն։

Զրահակիր կրէյսերի զրահը աւելի թոյլ է։ Նրա զինաւորումը զրահաւորից աւելի թեթև է. նա չէ կրում երբէք մեծ թնդանօթներ և այդ պատճառներով էլ նա աւելի արագընթաց է և նրա գործունէութեան շրջանակը աւելի մեծ է։ Իւրաքանչիւր զրահակիր կրէյսէր արժէ 8—9 միլիոն ռուբլի։

Պաշտպանված կրէյսերը՝ ինչպէս անունը ցոյց է տալիս արդէն, պարզ կրէյսերից աւելի, իսկ զրահակիր կրէյսերից նուազ դիմացկուն, պատսպարված է։ Նրա հրետանին՝ արտիլերիան՝ նոյնպէս թոյլ է բաղդատմամբ միւսներին։ Արագութիւնն աւելի մեծ է։

Կրէյսերը՝ պաշտպանված կրէյսերից այնքան էլ մեծ տարբերութիւն չունի։ Նրանց երկուսն էլ յաճախ նոյն գործն են կատարում։ Նրանց

«Բազմավէպի» յայտարարութիւնից երևում է, թէ ինչ մեծամեծ նեղութիւններ է կրել Միաբանութիւնը այդ մեծ գործը գլուխ բերելու համար։ Նա մի առ մի աչքից անցրել է վանքի գրատան մէջ գտնված բոլոր հայ գրքերը—տաժան աշխատութիւն—և բացի դրանից 200 կտորից աւելի գիրք է բերել տուել զանազան տեղերից։ Այդ բազմավաստակ աշխատութիւնը շատ թեթևացած կը լինէր, ի հարկէ, եթէ հայ հեղինակները, թարգմանիչները և հրատարակիչները, որոնց մի երկու տարի առաջ Միաբանութիւնը կոչ արեց մի մի օրինակ իրանց հեղինակութիւններից և հրատարակութիւնից ուղարկելու վանքին, նոյն իսկ ոչ իբրև նուէր, այլ փոխանակութեամբ, արձագանք տուած լինէին նրա կոչին և հրաւէրին։ «Աշխատասիրողը շատ դիմումներ ըրած է—գանգատվում է «Բազմավէպը»—բայց շատ քիչեր բարեհաճում են պատասխանել»։

Այժմ ևս նա կրկնում է նոյն դիմումը և մենք ևս յորդորում ենք բոլոր մեր գրողներին, թարգմանիչներին, հրատարակիչներին, չը զլանալ մի մի, նոյն իսկ երկու երկու օրինակ ուղարկել «Բազմավէպի» խմբագրութեան իրանց գրուածներից, լաւ համոզված լինելով, որ դրանով նրանք կը թեթևացնեն այնպիսի մի ծանր և դժնդակ աշխատութիւն, որպիսին Հայ Մատենագիտութիւն կազմելու գործն է։

Դրա փոխարէն մենք, հայ գրողներս, կը ստանանք շուտով մի դեղեցիկ և օգտակար ու մեզ բոլորիս համար անհրաժեշտ մի հեղինակութիւն, որի համար առաջուց մեր շնորհաւորութիւնները և շնորհակալութիւններն ենք յայտնում Մխիթարեան բազմարդիւն Միաբանութեան, որ իր արժանաւոր ընդհանրական արքեպիսկոպոսի՝ Իգնատիոս Կիւրեղեան արքեպիսկոպոսի քահանայական յիսնամեայ յոբելեանի յիշատակին, մտածել է այդպիսի մի արժանաւոր ձօն մատուցանելու։

Հ. Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Տնային բժշկարան, Ա. բնախօսութիւն Անդամոցընդունութիւն բ. Վարակիչ, ներքին, կաշուի, վեներային հիւանդութիւններ. դեղարան. բառարան. հրատ. բժիշկ. Գ. Բաբեանի, Թիֆլիսի 1903, գինն է 1 հատոր 1 ր., 2 հատոր—1 ր. 60 կ. թարգմանեց գիւտ ա. քահ. Աղանեան

Բժշկապետ Բաբեանի ձեռնարկած հրատարակութիւնը «Տնային բժշկարան», որ լոյս է ընծայվում նրա խմբագրութեամբ. թէ հրատարակութեան հիմնական ծրագրով և թէ իր շատ ընդարձակ ծաւալով արժանի է կատարեալ ուշադրութեան։

Հրատարակիչը լոյս է ընծայել առայժմ միայն երկու հատոր. առաջինը, որ պարունակում է անատոմիայի և ֆիզիօլոգիայի դասընթացքը, տալիս է ծանօթութիւն այդ երկու գիտութեան մասին այնքան լիակատար, որ ամեն մի կոծել ամրոցները, քաղաքները։ Կրում են միլակ մեծութեան թնդանօթներ։

Դեստրոյէներ՝ ամենասրընթաց նաւերն են, կրէյսէրներից և ականանաւերից էլ արագընթաց։ Նրանք թռչում են ջրի վրա։ Իրանց պաշտօնն է լուսաւորել նաւատորմը, հալածել թշնամի ականանաւերն ու վաճառականական նաւերը և յարմար դէպքում նրանց գրաւել։ Ահա այդ պատճառով էլ նրանք անուանվում են, երբեմն հակա-ականանաւեր, կօնտր-տորպիլօրներ։

Ականանաւերը կամ տորպեդանաւերը, որոնց մասին այնքան յաճախ է խօսվում պատերազմի ընթացքում, պողպատեայ փոքրիկ նաւեր են։ Սրանց գլխաւոր արժանիքը կայանում է թշնամու նաւերը՝ յանկարծակի բերելու և նրանց գաղտնապէս հարուածելու մէջ։ Իրանց մեծագոյն զէնքն է ականը, թէև ունենում են միշտ արագաձիգ փոքրիկ թնդանօթներ և մեքրայեօզներ, այսինքն մի քանի բերան ունեցող թնդանօթներ, որոնք գնդակները անձրևի նման թափում են։ Այդ փոքրիկ, բայց սարսափելի նաւերը՝ գուցէ ամենավտանգաւոր թշնամիներն են։ Ինչպէս տեսաք, երբեմն զրահաւորներից էլ մեծ գործ են կատարում։ Օգտվելով մթութիւնից, մշուշից և յաճախ անհսկողութիւնից, ահագին զրահաւորներ են խորտակում, ջրասոյզ անում։ Եւ այդ, շնորհիւ միայն իրանց ականների։ Բայց ինչ է ականը։

Երեսակայեցէք 5 մէտր կամ մօտ 7 արշին երկարութեամբ և 450 հազարերորդամէտր տրամագծով մի ընդծուեայ նաւակ, որը ունի սիգարի ձև։ Այդ նաւակը բաժանված է երեք մասի։ Առաջին մասում լցված է 100 կիլոգրամ, վեց պուդից աւելի դինամիտ։ Երկրորդ մասում կայ ճնշված օդ։ Երրորդ և վերջին մասի մէջ դետեղված է մի մեքենայ, որը երկրորդ մասում գտնվող ճնշված օդի ազդեցութեան տակ գործում է և շարժման մէջ է դնում նաւակը։ Նաւակի յետևում կայ երկու պտուտակ (վինտ), որոնք առաջ են բերում նաւակի սկզբնական շարժումը ջրի մէջ և իւրաքանչիւրը իրար հակառակ կողմ դառնալով՝ ապահովում են նաւակի ուղղութիւնը։ Իսկ հորիզոնական դիրքով մի դէկ նաւակը ջրի մէջ որոշ խորութեան տակ է պահում, օրինակի համար 2—3 մէտր ջրի մակերևոյթից ցած։ Ահա իր գլխաւոր գծերում, ականի կազմութիւնը։ Զը մոռանանք ասելու, որ 100 կիլոգրամ դինամիտի պայթումը առաջ բերելու համար, այդ սիգարաձև նաւակի ծայրը զինված է մի փամփուշտով՝ որը բաղխվելով զրահաւորի կողին, բռնկում է և բռնկեցնում այդ ահագին քանակութեամբ դինամիտը։ Պէտք է շեշտել, որ ականի այդ բաղխումը չէ որ պատռում է զրահաւորի կողը, այլ մեծ քանակութեամբ դինամիտը պայթելով՝ յանկարծ ջրի մի սարսափելի կոյտ ուժգնութեամբ վեր է բարձրացնում և խփում՝ նաւի կողին, որ ճեղքվում է։ Ահա թէ ինչ է ականը։

Այժմ մեր ընթերցողների համար պարզ է, որ ականանաւը մի այնպիսի մարտանաւ է, որ զինված է ականներով։ Ականը՝ դետեղված է մի մեծ թանձր խողովակում, որ սպանօ-ամերիկական պատերազմից առաջ, միշտ ականանաւից դէպի դուրս, օդի մէջ էր ցցված լինում։ Բայց Սանտիագոյի նաւամարտում, երբ մի սպանիական ականանաւ՝ պատրաստվում էր ամերիկական մի մարտանաւի վրա ական արձակելու, այս վերջինը նշմարելով թշնամու շարժումը, աւելի ճարպիկ գտնվեց և ռումբի մի հարուածով աջողեց պայթեցնել արձակվելու վրա եղող ականը և ջնասեց ամբողջ ականանաւին։ Այդ դէպքից յետոյ, ականի խողովակները սկսեցին շինել ջրի մէջ։ Երբ մի ականանաւ ուզում է թշնամի նաւը հարուածել, մինչև 800—1000 մէտր հեռու է կենում նրանից։ Ականը՝ թէպէտև 1000 մէտրից էլ հեռու կարող է գնալ, բայց այդ հեռաւորութիւնից այն կողմ աջողութեան ջանքերը նուազում են։ Ականանաւը թշնամու զրահաւորի դիմաց կանգնելուց յետոյ, ականաձիգը՝ լաւ նշան, առնելով՝ մի մեքենական գործողութեամբ՝ խողովակից ականը արձակում է ջրի մէջ մի քանի մէտր հեռու։ Այնուհետև նա՝ իր պարունակած մեքենական ոյժի, պտուտակների և դեկի օգնութեամբ՝ լողում է ջրի տակից դէպը թշնամի նաւը՝ որոշված ուղղութիւնով և խորութիւնով։ Նա գնում է խփում ճիշդ նշան առնված տեղին փամփուշտաւոր ծայրով ու առաջացնում է դինամիտի պայթումն ու զրահաւորի ջնասումը։ Ականի արագութիւնը խիստ մեծ է՝ 30—40 հանգոյց՝ ժամում։ Ականանաւը՝ երբ նաւին չէ հասնում, կամ վերջապէս շեղում է իր նպատակից, ականի երկրորդ մասում պարունակվող ճնշված օդը սպառվում է և անզօր է լինում դիմադրելու ջրի մղումին, փակ պահելու մի դռնակ, որ գտնվում է նոյն մասի մէջ։ Այն ժամանակ ջուրը ներս է խուժում այդ դռնակից և խորասուզում է ականը, որպէս զի նա բարեկամ նաւերի համար վտանգ չը սպառնայ։

Մի ականը արժէ 2000—2500 ռուբլի։ Բայց կարող է ոչնչացնել տասնեակ միլիոններ արժող զրահաւորներին։

Զուէն

թնդանօթները երկաթեայ մի դիմակով միայն պատսպարված են։ Նրանք աշխատում են անընկատ մնալ նաւատորմիների ահեղ ընդհարման ժամանակ, և գնում կանգնում են զրահաւորների ետևը, հեռուն։ Նրանց պաշտօնն է ընդհանրապէս, ինչպէս բառը ցոյց է տալիս՝ (կրէյսէր—յածանաւ, շրջանաւ) յածել, թափառել ծովի վրա և խմաց տալ թշնամի նաւատորմի գոյութիւնը։ Նրանք նոյն պաշտօնն են կատարում ծովի վրա՝ ինչ պաշտօն որ կատարում են զօրքի առաջապահ գնդերը ցամաքի վրա։ Նրանք զրահաւորների, ամբողջ նաւատորմի թիկնապահներն են։ Նաւատորմը, երբ գնում է, կրէյսէրները, նրա չորս կողմից, բաւական հեռաւորութեան վրա, առաջանում են։ Մինչդեռ նաւատորմը կենտրոնում է, կրէյսէրները ցրված են ասպիճանաբար իրարից հեռու. այնպէս որ, երբ ամենահեռու կրէյսէրը նշմարում է թշնամու գոյութիւնը, նա լուր է տալիս անմիջապէս իր ետև գտնվող կրէյսէրին, սա էլ իր կարգին մի ուրիշին, մինչև որ լուրը հասնում է ծովակալին՝ նաւատորմի հրամանատարին։ Այսպէս՝ կրէյսէրների գործ դրած գործօն հսկողութեան շնորհիւ, նաւատորմը՝ ծովի բաւական ընդարձակ տարածութեան վրա անցած դարձածի մասին կատարեալ ծանօթութիւն է ստանում։ Կրէյսէրները, երբ նկատում են թշնամի նաւատորմը, և երբ վստահ են լինում, որ նա իրանց ոյժերից փոքր է, աշխատում են նրան ճարպիկ կերպով զրաղեցնել, նրա ճանապարհը կտրել, մինչև որ հասնին իրանց ոյժերը։

Թնդանօթակիրները՝ զրահաւորներից և կրէյսէրներից փոքր նաւեր են և հետևաբար կարող են աւելի ժօտ գնալ եզերքներին, ռմբահոծել ամրոցները, քաղաքները։ Կրում են միլակ մեծութեան թնդանօթներ։

Դեստրոյէներ՝ ամենասրընթաց նաւերն են, կրէյսէրներից և ականանաւերից էլ արագընթաց։ Նրանք թռչում են ջրի վրա։ Իրանց պաշտօնն է լուսաւորել նաւատորմը, հալածել թշնամի ականանաւերն ու վաճառականական նաւերը և յարմար դէպքում նրանց գրաւել։ Ահա այդ պատճառով էլ նրանք անուանվում են, երբեմն հակա-ականանաւեր, կօնտր-տորպիլօրներ։

Ականանաւերը կամ տորպեդանաւերը, որոնց մասին այնքան յաճախ է խօսվում պատերազմի ընթացքում, պողպատեայ փոքրիկ նաւեր են։ Սրանց գլխաւոր արժանիքը կայանում է թշնամու նաւերը՝ յանկարծակի բերելու և նրանց գաղտնապէս հարուածելու մէջ։ Իրանց մեծագոյն զէնքն է ականը, թէև ունենում են միշտ արագաձիգ փոքրիկ թնդանօթներ և մեքրայեօզներ, այսինքն մի քանի բերան ունեցող թնդանօթներ, որոնք գնդակները անձրևի նման թափում են։ Այդ փոքրիկ, բայց սարսափելի նաւերը՝ գուցէ ամենավտանգաւոր թշնամիներն են։ Ինչպէս տեսաք, երբեմն զրահաւորներից էլ մեծ գործ են կատարում։ Օգտվելով մթութիւնից, մշուշից և յաճախ անհսկողութիւնից, ահագին զրահաւորներ են խորտակում, ջրասոյզ անում։ Եւ այդ, շնորհիւ միայն իրանց ականների։ Բայց ինչ է ականը։

Երեսակայեցէք 5 մէտր կամ մօտ 7 արշին երկարութեամբ և 450 հազարերորդամէտր տրամագծով մի ընդծուեայ նաւակ, որը ունի սիգարի ձև։ Այդ նաւակը բաժանված է երեք մասի։ Առաջին մասում լցված է 100 կիլոգրամ, վեց պուդից աւելի դինամիտ։ Երկրորդ մասում կայ ճնշված օդ։ Երրորդ և վերջին մասի մէջ դետեղված է մի մեքենայ, որը երկրորդ մասում գտնվող ճնշված օդի ազդեցութեան տակ գործում է և շարժման մէջ է դնում նաւակը։ Նաւակի յետևում կայ երկու պտուտակ (վինտ), որոնք առաջ են բերում նաւակի սկզբնական շարժումը ջրի մէջ և իւրաքանչիւրը իրար հակառակ կողմ դառնալով՝ ապահովում են նաւակի ուղղութիւնը։ Իսկ հորիզոնական դիրքով մի դէկ նաւակը ջրի մէջ որոշ խորութեան տակ է պահում, օրինակի համար 2—3 մէտր ջրի մակերևոյթից ցած։ Ահա իր գլխաւոր գծերում, ականի կազմութիւնը։ Զը մոռանանք ասելու, որ 100 կիլոգրամ դինամիտի պայթումը առաջ բերելու համար, այդ սիգարաձև նաւակի ծայրը զինված է մի փամփուշտով՝ որը բաղխվելով զրահաւորի կողին, բռնկում է և բռնկեցնում այդ ահագին քանակութեամբ դինամիտը։ Պէտք է շեշտել, որ ականի այդ բաղխումը չէ որ պատռում է զրահաւորի կողը, այլ մեծ քանակութեամբ դինամիտը պայթելով՝ յանկարծ ջրի մի սարսափելի կոյտ ուժգնութեամբ վեր է բարձրացնում և խփում՝ նաւի կողին, որ ճեղքվում է։ Ահա թէ ինչ է ականը։

Այժմ մեր ընթերցողների համար պարզ է, որ ականանաւը մի այնպիսի մարտանաւ է, որ զինված է ականներով։ Ականը՝ դետեղված է մի մեծ թանձր խողովակում, որ սպանո-ամերիկական պատերազմից առաջ, միշտ ականանաւից դէպի դուրս, օդի մէջ էր ցցված լինում։ Բայց Սանտիագոյի նաւամարտում, երբ մի սպանիական ականանաւ՝ պատրաստվում էր ամերիկական մի մարտանաւի վրա ական արձակելու, այս վերջինը նշմարելով թշնամու շարժումը, աւելի ճարպիկ գտնվեց և ռումբի մի հարուածով աջողեց պայթեցնել արձակվելու վրա եղող ականը և ջնասեց ամբողջ ականանաւին։ Այդ դէպքից յետոյ, ականի խողովակները սկսեցին շինել ջրի մէջ։ Երբ մի ականանաւ ուզում է թշնամի նաւը հարուածել, մինչև 800—1000 մէտր հեռու է կենում նրանից։ Ականը՝ թէպէտև 1000 մէտրից էլ հեռու կարող է գնալ, բայց այդ հեռաւորութիւնից այն կողմ աջողութեան ջանքերը նուազում են։ Ականանաւը թշնամու զրահաւորի դիմաց կանգնելուց յետոյ, ականաձիգը՝ լաւ նշան, առնելով՝ մի մեքենական գործողութեամբ՝ խողովակից ականը արձակում է ջրի մէջ մի քանի մէտր հեռու։ Այնուհետև նա՝ իր պարունակած մեքենական ոյժի, պտուտակների և դեկի օգնութեամբ՝ լողում է ջրի տակից դէպը թշնամի նաւը՝ որոշված ուղղութիւնով և խորութիւնով։ Նա գնում է խփում ճիշդ նշան առնված տեղին փամփուշտաւոր ծայրով ու առաջացնում է դինամիտի պայթումն ու զրահաւորի ջնասումը։ Ականի արագութիւնը խիստ մեծ է՝ 30—40 հանգոյց՝ ժամում։ Ականանաւը՝ երբ նաւին չէ հասնում, կամ վերջապէս շեղում է իր նպատակից, ականի երկրորդ մասում պարունակվող ճնշված օդը սպառվում է և անզօր է լինում դիմադրելու ջրի մղումին, փակ պահելու մի դռնակ, որ գտնվում է նոյն մասի մէջ։ Այն ժամանակ ջուրը ներս է խուժում այդ դռնակից և խորասուզում է ականը, որպէս զի նա բարեկամ նաւերի համար վտանգ չը սպառնայ։

Մի ականը արժէ 2000—2500 ռուբլի։ Բայց կարող է ոչնչացնել տասնեակ միլիոններ արժող զրահաւորներին։

Զուէն

«Բազմավէպի» յայտարարութիւնից երևում է, թէ ինչ մեծամեծ նեղութիւններ է կրել Միաբանութիւնը այդ մեծ գործը գլուխ բերելու համար։ Նա մի առ մի աչքից անցրել է վանքի գրատան մէջ գտնված բոլոր հայ գրքերը—տաժան աշխատութիւն—և բացի դրանից 200 կտորից աւելի գիրք է բերել տուել զանազան տեղերից։ Այդ բազմավաստակ աշխատութիւնը շատ թեթևացած կը լինէր, ի հարկէ, եթէ հայ հեղինակները, թարգմանիչները և հրատարակիչները, որոնց մի երկու տարի առաջ Միաբանութիւնը կոչ արեց մի մի օրինակ իրանց հեղինակութիւններից և հրատարակութիւնից ուղարկելու վանքին, նոյն իսկ ոչ իբրև նուէր, այլ փոխանակութեամբ, արձագանք տուած լինէին նրա կոչին և հրաւէրին։ «Աշխատասիրողը շատ դիմումներ ըրած է—գանգատվում է «Բազմավէպը»—բայց շատ քիչեր բարեհաճում են պատասխանել»։

Այժմ ևս նա կրկնում է նոյն դիմումը և մենք ևս յորդորում ենք բոլոր մեր գրողներին, թարգմանիչներին, հրատարակիչներին, չը զլանալ մի մի, նոյն իսկ երկու երկու օրինակ ուղարկել «Բազմավէպի» խմբագրութեան իրանց գրուածներից, լաւ համոզված լինելով, որ դրանով նրանք կը թեթևացնեն այնպիսի մի ծանր և դժնդակ աշխատութիւն, որպիսին Հայ Մատենագիտութիւն կազմելու գործն է։

Դրա փոխարէն մենք, հայ գրողներս, կը ստանանք շուտով մի դեղեցիկ և օգտակար ու մեզ բոլորիս համար անհրաժեշտ մի հեղինակութիւն, որի համար առաջուց մեր շնորհաւորութիւնները և շնորհակալութիւններն ենք յայտնում Մխիթարեան բազմարդիւն Միաբանութեան, որ իր արժանաւոր ընդհանրական արքեպիսկոպոսի՝ Իգնատիոս Կիւրեղեան արքեպիսկոպոսի քահանայական յիսնամեայ յոբելեանի յիշատակին, մտածել է այդպիսի մի արժանաւոր ձօն մատուցանելու։

Հ. Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Տնային բժշկարան, Ա. բնախօսութիւն Անդամոցընդունութիւն բ. Վարակիչ, ներքին, կաշուի, վեներային հիւանդութիւններ. դեղարան. բառարան. հրատ. բժիշկ. Գ. Բաբեանի, Թիֆլիսի 1903, գինն է 1 հատոր 1 ր., 2 հատոր—1 ր. 60 կ. թարգմանեց գիւտ ա. քահ. Աղանեան

Բժշկապետ Բաբեանի ձեռնարկած հրատարակութիւնը «Տնային բժշկարան», որ լոյս է ընծայվում նրա խմբագրութեամբ. թէ հրատարակութեան հիմնական ծրագրով և թէ իր շատ ընդարձակ ծաւալով արժանի է կատարեալ ուշադրութեան։

Հրատարակիչը լոյս է ընծայել առայժմ միայն երկու հատոր. առաջինը, որ պարունակում է անատոմիայի և ֆիզիօլոգիայի դասընթացքը, տալիս է ծանօթութիւն այդ երկու գիտութեան մասին այնքան լիակատար, որ ամեն մի

Ներ ստացված գրքեր.—1) «Հանրամատչելի դրադարան Հ. Աղաբեկեանի I—«Անդրսէնի հէքիաթները, թարգմ. Տ. Զաւէն, Թիֆլիս, 1904, եր. 165, գինը 50 կոպ., II—«Արբեցողութեան դէմ», Թիֆլիս, 1904, եր. 70, գինը 15 կոպէկ. 2) Ալէքսանդր Ազէլեան—«Մարվող ճրագներ», պիէս 3 գործողութեամբ, Թիֆլիս, 1904, եր. 54, գինը 50 կոպ., 3) «Երգեր, առակներ, հանելուկներ, թերահաւատութիւններ... խոտորջրոյ», հաւաքեց Հ. Մ. Հ. Գաւառացի, Թիֆլիս, 1904, եր. 134, գինը 50 կոպէկ. 4) Յարութիւն Եսայեան—«Առաջին Մուրացկանութիւնը», 1904, եր. 31, գինը 8 կոպէկ, 5) Գր. Բազ.—Աղաջանեանց—«Լեգենդներ», Բաքու, 1904, եր. 16, գինը 5 կ., 6) «Գենդանիների վարակիչ հիւանդութիւնների մասին», կազմեց Գ. Ղազարեան, Վաղարշապատ, 1904, եր. 53, գինը 8 կոպէկ, 7) «Շահզադէ եւ Փերիխանում» (հէքիաթ), գրեց Ա. Փ., Թիֆլիս, 1903, եր. 158, գինը 30 կ., 8) Ա. Զիկոյ—«Մարդը պատեանի մէջ», թարգմ. Ա. Բարութչ. Շուշի, 1904, եր. 22, գինը 7 կ., 9) Գարեգին վարդապետ Յովսէփեան—«Խոսրովիկ Թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին», Վաղարշապատ, 1903, եր. 210, գինը 1 ռուբլի 20 կոպէկ, 10) Բժ. Վանան Արծրունի—«Վատ Յաւ կամ Սիֆիլիս», երկրորդ մաս, Թիֆլիս, 1904, եր. 48, գինը 15 կոպէկ, 11) Լեւոն Խանսանամեան—«Տէր-Մաթալ եւ իր զոհերը», վէպ. Ալէքսանդրոպոլ, 1903, եր. 135, գինը 35 կոպէկ, 12) «Новое Обозрѣніе» за 20 лѣтъ 1884—1903 г.» Тифлисъ, 1903, стр. 160, ц. 30 коп. 13) Ал. Калантаръ. Опытъ инструкторской дѣятельности по молочному хозяйству въ Закавказьѣ. Тифлисъ 1904 г.

[1]) Միանգամայն բաժանելով գոկտոր Խատիսեանի հայեցողը բժշկապետ Բաբեանի օգտակար և յարգելի աշխատութեան մասին, չենք կարող մոնացոյց չանել մի հանգամանքի վրա, որի մասին քննադատը զանց է առել խօսել. դա թարգմանութեան լեզուն է։ Հարկաւոր էր թարգմանութիւնը յանձնել մի հմուտ և մանաւանդ մատնագէտ անձի և այն ժամանակ տեղի չէին ունենայ այն բազմաթիւ սխալները, որոնց շնորհիւ հրատարակութեան արդիւնքը կարող է մեծապէս վնասվել։

Խմբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 12-ին

Իմ վաղաժամամ որդու, Սաշա Մէլիք-Փարսադանեանցի թաղման հանդէսը, բազմաթիւ յարգողների թւում, իր ներկայութեամբ պատուեց եւ արժանապատիւ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, որ ոչ սակաւ մխիթարութիւն պատճառեց ինձ։

Որովհետեւ գերապատիւ վարդապետը հրաժարվեց ստանալ իրան սահմանված աջնամբոյրը, ուստի ներփակեալ ուղարկելով յարգելի խմբագրութեանդ 30 ռուբլի, խնդրում եմ այդ գումարով երեք օրինակ «Մշակ» ծրիաքար ուղարկել երեք գիւղերի շինական հասարակութիւններին, որոնց թւում խնդրեմ մի օրինակ ուղարկել Զանգեզուրի գաւառի «Պէխ» գիւղը, որ իմ դժբախտ որդու հօր հայրենիքն է. մնացած երկուսը թողնում եմ խմբագրութեանդ տրամադրութեան։

Պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել արժանապատիւ Մեսրոպ վարդապետին իր ցոյց տուած համակրութեան համար։

Ն. Դոլուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարիները մենք ոչնչել ենք Տեառնընդառաջը և չենք հրատարակել լրագիրը։ Այս տարի պատերազմի պատճառով վճռեցինք հրատարակել համար, չը թողնելով մեր ընթերցողներին առանց ընթացիկ լուրերի։

Մոսկվայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն այս յունվարի 31-ին ուղարկել է լուսաւորութեան մինիստրին Մոսկվայի Կայսերական համալսարանի խորհրդի հետևեալ ամենահպատակ զգացմունքներ արտայայտող ուղերձը։ «Զմայլանքով հետևելով Ձերդ Մեծութեան խաղաղասէր ձեռնարկութիւններին, որոնք մի անգամ ևս ցոյց տուին, որ Ռուսաստանն իր

վերջին մասի մէջ դետեղված է մի մեքենայ, որը երկրորդ մասում գտնվող ճնշված օդի ազդեցութեան տակ գործում է և շարժման մէջ է դնում նաւակը։ Նաւակի յետևում կայ երկու պտուտակ (վինտ), որոնք առաջ են բերում նաւակի սկզբնական շարժումը ջրի մէջ և իւրաքանչիւրը իրար հակառակ կողմ դառնալով՝ ապահովում են նաւակի ուղղութիւնը։ Իսկ հորիզոնական դիրքով մի դէկ նաւակը ջրի մէջ որոշ խորութեան տակ է պահում, օրինակի համար 2—3 մէտր ջրի մակերևոյթից ցած։ Ահա իր գլխաւոր գծերում, ականի կազմութիւնը։ Զը մոռանանք ասելու, որ 100 կիլոգրամ դինամիտի պայթումը առաջ բերելու համար, այդ սիգարաձև նաւակի ծայրը զինված է մի փամփուշտով՝ որը բաղխվելով զրահաւորի կողին, բռնկում է և բռնկեցնում այդ ահագին քանակութեամբ դինամիտը։ Պէտք է շեշտել, որ ականի այդ բաղխումը չէ որ պատռում է զրահաւորի կողը, այլ մեծ քանակութեամբ դինամիտը պայթելով՝ յանկարծ ջրի մի սարսափելի կոյտ ուժգնութեամբ վեր է բարձրացնում և խփում՝ նաւի կողին, որ ճեղքվում է։ Ահա թէ ինչ է ականը։

Այժմ մեր ընթերցողների համար պարզ է, որ ականանաւը մի այնպիսի մարտանաւ է, որ զինված է ականներով։ Ականը՝ դետեղված է մի մեծ թանձր խողովակում, որ սպանո-ամերիկական պատերազմից առաջ, միշտ ականանաւից դէպի դուրս, օդի մէջ էր ցցված լինում։ Բայց Սանտիագոյի նաւամարտում, երբ մի սպանիական ականանաւ՝ պատրաստվում էր ամերիկական մի մարտանաւի վրա ական արձակելու, այս վերջինը նշմարելով թշնամու շարժումը, աւելի ճարպիկ գտնվեց և ռումբի մի հարուածով աջողեց պայթեցնել արձակվելու վրա եղող ականը և ջնասեց ամբողջ ականանաւին։ Այդ դէպքից յետոյ, ականի խողովակները սկսեցին շինել ջրի մէջ։ Երբ մի ականանաւ ուզում է թշնամի նաւը հարուածել, մինչև 800—1000 մէտր հեռու է կենում նրանից։ Ականը՝ թէպէտև 1000 մէտրից էլ հեռու կարող է գնալ, բայց այդ հեռաւորութիւնից այն կողմ աջողութեան ջանքերը նուազում են։ Ականանաւը թշնամու զրահաւորի դիմաց կանգնելուց յետոյ, ականաձիգը՝ լաւ նշան, առնելով՝ մի մեքենական գործողութեամբ՝ խողովակից ականը արձակում է ջրի մէջ մի քանի մէտր հեռու։ Այնուհետև նա՝ իր պարունակած մեքենական ոյժի, պտուտակների և դեկի օգնութեամբ՝ լողում է ջրի տակից դէպը թշնամի նաւը՝ որոշված ուղղութիւնով և խորութիւնով։ Նա գնում է խփում ճիշդ նշան առնված տեղին փամփուշտաւոր ծայրով ու առաջացնում է դինամիտի պայթումն ու զրահաւորի ջնասումը։ Ականի արագութիւնը խիստ մեծ է՝ 30—40 հանգոյց՝ ժամում։ Ականանաւը՝ երբ նաւին չէ հասնում, կամ վերջապէս շեղում է իր նպատակից, ականի երկրորդ մասում պարունակվող ճնշված օդը սպառվում է և անզօր է լինում դիմադրելու ջրի մղումին, փակ պահելու մի դռնակ, որ գտնվում է նոյն մասի մէջ։ Այն ժամանակ ջուրը ներս է խուժում այդ դռնակից և խորասուզում է ականը, որպէս զի նա բարեկամ նաւերի համար վտանգ չը սպառնայ։

Մի ականը արժէ 2000—2500 ռուբլի։ Բայց կարող է ոչնչացնել տասնեակ միլիոններ արժող զրահաւորներին։

Զուէն

արտաքին քաղաքականութեան մէջ անխախտ կերպով ձգտում է իրականացնելու բարոյական իդեալները՝ այժմ, երբ մեր թշնամին դաւանաճնշօրէն սկսեց պատերազմական գործողութիւնները, Մոսկվայի համալսարանի խորհուրդը աղօթում է Ամենաբարձրեալին յաղթութիւն շնորհելու ռուսական կարիճ բանակին և արքանում է առ ոտս Ձեր, Թագաւոր, մեր ամենահպատակ զգացմունքները և մեր վճռական պատրաստակամութիւնն ամենատեսակ զոհողութիւնների, որ կարող էր պահանջել մեզանից Ձեր Կայսերական կամքը»։

—

Այսօր կէսօրվայ ժամը 1-ին, Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցում վարժուհիների ընկերութեան նախաձեռնութեամբ նշանակված է Ն. Կ. Միխայլովսկու հոգեհանդիսաը։

—

«Հանդէս Ամսօրեայի» մէջ կարդում ենք. «Ուրախալի լուր մը բերաւ մեզի Պետերբուրգէն քաղաքս ժամանող՝ իրաւագիտութեան հայ ուսանող մը, թէ պրոֆէսօր մագիստրոս Գր. Խալաթեանց դոկտորի աստիճանին բարձրացեր է։ Պատիւ մը՝ որ Ռուսաստանի մէջ մեծ դէժուարութեամբ ու շատ ցանցառ կը տրուի։ Ուսուցչապետ Խալաթեանցի գրաւոր վիճաբանութեան նիւթն է եղեր «Հայ Արշակունիք ըստ Մովսէսի Խորենացւոյ» ռուսերէն երկհատոր ուսումնասիրութիւնը»։

—

Երէկ ամսիս 12-ին առաւօտեան ժամը 11-ին կատարվեց իշխան Ն. Վ. Բերութեանի թաղումը։ Յուղարկաւորութեանը մասնակցում էր Թիֆլիսի հոգևորականութիւնը, համբարները իրանց դրօշակներով և հանգուցեալի բազմաթիւ ծանօթներն ու յարգողները։ Ներկայ էին բազմաթիւ պաշտօնեաներ։

—

«Русск. Вѣд.»-ին գրում են Խէրսօնից, որ Օդեսայի բակտերիօլոգիական կայարանի կառավարիչ դօքտոր Դիատրոպովը կանչվել է վիճակով զինւոր Հեռաւոր Արևելք գնալու համար։ Խէրսօնի նահանգական խորհուրդը, աչքի առաջ ունենալով, որ Ռուսաստանի հարաւում վարակիչ հիւանդութիւններ են տարածվել առնասունների մէջ և որ բակտերիօլոգիական կայարանը մեծ ծառայութիւններ է անում ժողովրդին այս նեղ ժամանակները. աչքի առաջ ունենալով նոյնպէս, որ Դիատրոպովի տեղն արժանաւորապէս բռնող մարդ ներկայ րոպէում գտնելը դժուար է—խորհուրդը դիմել է նոյն շրջանի զինուորական հրամանատարին և խնդրել որ պ. Դիատրոպովին, եթէ հնարաւոր է, ազատ թողնեն զինուորական ծառայութիւնից։

—

ՆՈՒԽՈՒՅ մեզ հեռագրում են հետևեալը. «Այսօր, փետրվարի 14-ին, ս. Մինասի եկեղեցում հայոց հոգևորականութիւնը, բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ, կատարեց մաղթանք ռուսաց զէնքի յաղթութեան համար Հեռաւոր Արևելքում։ Իեղական յաջորդը կարդաց Բարձրագոյն Մանիֆէստը և հրաւէր կարդաց ըստ կարու չափի օգնութիւն հասցնելու վիրաւորներին և ընկածների ընտանիքներին»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Ռուս-եապօնական պատերազմի առիթով այստեղ ևս մաղթանքներ կատարվեցին՝ ռուսաց զօրքին զէնքի զօրութիւն պարգևելու համար»։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 5-ին տեղիս հայոց ուսումնարանում, Վարդանանց տօնի առիթով, հանդէս կար։ Ուսուցիչներից մէկը, պ. Տ.—կ., առենախօսութիւն կարդաց, նիւթ ընտրելով Վարդանանց պատմութիւնը։ Դպրոցի աշակերտներից կազմված երգաձայն խումբը երգեց մի քանի երգ։ Այնուհետև տրվեց երկու ներկայացում. մէկը հայերէն լեզուով՝ «Պոլուխմպերիալ», միւսը ռուսերէն՝ «Царица Цвѣтовъ»։

—

ՂՈՒՐԲԱՅԻՑ մեզ գրում են. «Եղանակները դեռ մինչև այսօր էլ գարնանային են. գիշերները, սակայն, ցուրտ է լինում, բայց ոչ այն չափով, որ զրանից ՀՍասվեն այգիները։—Շատերը նոյն իսկ հիմա սկսում են փողեր բաժանել այգետէրերին և գնում են նրանց այգիների բերքը, որից պիտի օգտվեն դեռ օգոստոսին, սեպտեմբերին։ Քանի որ այգեգործութիւնը մեր գաւառի գլխաւոր արդիւնաբերութեան ճիւղն է համարվում, աշխատում են այգիների թիւը աւելացնել. նոր այգիներ են տնկում և մշակում։ Անկասկած մեր պտղեղէնը Ռուսաստանի մեծ ու փոքր քաղաքների շուկաներում պահանջ է դարձել. մեծ չափերով մրգեր են ուղարկվում նոյն իսկ Մոսկվա, Նիժնի, Կազան և ուրիշ տեղեր։ Նոյն իսկ այժմ ուղարկում են խնձոր այդ քաղաքները։ Անցեալ տարվայ բերքը լաւ օգուտներ տուեց մեր պտղավաճառներին, գլխաւորապէս Սատարխանը, ուր ծախվել է պտղեղէնը խիստ ձեռնտու գներով. յետոյ յաջորդաբար Բաքուն, Ցարիցինը, Սարատովը և ուրիշները։ Խօսք չը կայ, որ այգեգործութիւնը զարկ է տալիս և մեր վաճառականութեանը»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Ներկայ ձմեռվայ ընթացքում սկզբից շատ սաստիկ սառնամանիքներ տեղի ունեցան, չը նայած, որ ձիւնը այնքան էլ խորութեամբ չէր նստած։ Այն ինչ վերջին շաբաթներում արդէն եղանակը զգալի կերպով տաքացել է, ձիւնները հալվում, ոչնչանում են։ Եթէ այսպէս շարունակվի մի քանի շաբաթ էլ, անշուշտ մարտ ամսին վարուցանքը կը սկսվի, եթէ սովորական «բուք ու բօքանը» նորից բարդութիւններ չառաջացնեն գաշտային պարապմունքների դէմ»։

—

Թիֆլիսի բաժանորդներին ներկայ համարի հետ բաժանվում է Դօրոժնոյի մագազինի յայտարարութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 փետրվարի

ՏՕԿԻՕ։ «Ռէյտ. գործ.»։ Կօրէայում գտնվող ռուսական զօրքերի ընդհանուր Թիւն այժմ հազարից աւելի չէ։ Ռումները աստիճանաբար յետ նահանջեցին առաջ շարժվող եապօնացիների առջևից դէպի Եալու։

ՊԷԿԻՆ։ «Ռէյտ. գործ.»։ Զինական երկաթուղիների գլխաւոր կառավարչի արած պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, մանջուրական երկաթուղին խիստ կերպով պաշտպանվում է. ամեն մի մղոնի (1¾ վերստ) վրա՝ յարմարաւոր տեղերում՝ շինված են հրակելու բարձր աշտարակներ և մէջը դրված 130 կօզակներ։

ՆԱԳԱՍԱԿԻ։ (Ստեփան. գործ.)։ Իտալական «Էլբա» կրէյսէրը գնաց Զէմուլպօ, որպէս զի Հօնգկօնգ բերէ ռուսական «Վարեագ» և «Կորէեց» նաւերի վիրաւորներին։ «Էլբան» վիրաւորներին կը յանձնէ «Իտալական Ընդհանուր Նաւարկութեան» ընկերութեան նաւերին։

ԲԵՐԼԻՆ։ Քննադատելով եապօնացիների Պօրտ-Արտուրի նաւահանգստի մուտքը փակելու անաջող փորձը, ամբողջ մամուլը ցոյց է տալիս, որ այդ դէպքի նշանակութիւնը գլխաւորապէս կայանում է նրանում, որ ռուսական ծովային ուժերն ընդունակ են պատերազմական գործին։ Զը պէտք է փոքրացնել ռուսական աշխողութեան բարոյական տպաւորութիւնը։ Այստեղ բարձր են գնահատում «Ռէտվիզանի« աչքի ընկնող վճռական մասնակցութիւնը եապօնական վերջին յարձակումը յետ մղելու գործում, մանաւանդ որ այստեղ ընդհանրապէս կասկածում էին նրա պատերազմական պիտանիութեան վրա։

ՍԷՈՒԼ։ (Ռէյտ, գործ.)։ Ռուսական ձիաւոր շարժական խմբերը կորտեցին Պենիան տանող հեռագրական թելերը։ Կօրէական նախկին մինիստր Իօկ-Իկը եապօնական պատերազմական նաւով ուղարկվեց Եապօնիա։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ (Ռէյտ. գործ.)։ Կառավարութիւնը վճռել է նոր ծովային հեռագրաթել անցկացնել Եապօնիայի, Դուամ կղզու և Ֆիլիպպեան կղզիների միջև, միացնելով դա Խաղաղ-ովկիանոսի գծի հետ։ Այդ միջոցը պատճառաբանվում է նրանով, որ ամեն բան, ինչ որ ձեռնարկվում է առևտրական յարաբերութիւնների հեշտացման համար, չէ պարունակում իր մէջ չեզոքութեան խանգարում, իսկ այդ ծրագրվող թելի նպատակն է թոյլ չը տալ, որ Եապօնիան առանձնանայ այն դէպքում, երբ Ռուսաստանը կորատէ այժմ Եապօնիայի և Շանգհայի միջև գոյութիւն ունեցող երկու թելերն էլ։

ՎԻԵՆՆԱ։ Պալատում կայացաւ հանդիսաւոր ճաշ Շվէդիայի թագաւորի պատուին։ Ֆրանց-Յովսէփ կայսրը առաջարկեց թագաւորի կենացը, որը պատասխանեց կայսրի կենացն առաջարկելով։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Պատերազմողների անմիջական կարիքների համար Իրկուտսկի լեռնային ընկերութիւնը ուղարկեց Դալնի սպիտակեղէնների, վիրակապերի, տաք վերնազգեստների, վերմակների և ֆլանելի փաթաթանների առաջին պարտիան պէտք ունեցող զինուորներին բաժանելու նպատակով։ Նոր ծրարները պատրաստվում են ուղարկվելու համար։ Ընկերութեան նախագահ լեռնային առաջնորդ Իվանովը խնդրում է նուէրներն ուղարկել լեռնային վարչութեան հասցէով։

ԲԼԱԳՈՎԷՇՉԵՆՍԿ։ Կարմիր Խաչի համայնքն ուղարկել է պատերազմի դաշտը 8 գթութեան քոյրեր և հիւանդանոցի 10 մահճակալի համար սպիտակեղէններ։ Նահանգի զանազան հիմնարկութիւնների ծառայողները վճռել են նուիրել ռոճիկների 1-ից մինչև 5%-ը 6 ամիս շարունակ։ Լէվաշով վաճառականը նուիրեց 1,500 ռուբլի, հեռագրական պաշտօնեայ Գովորուշչենկոն—300 ր., երկրաչափ Կոնստանդինովը—100 ր.։ Մի քանի գիմնազիստներ կամաւոր գրվեցին գործող բանակի մէջ։

ՍՕՖԻԱ (դիմադիր շրջաններից)։ Պօլսից հաղորդում են, որ աւստրիական դեսպանատանը կայացաւ մակեդոնական ժանդարմերիայի կազմակերպութեան յանձնաժողովի նիստը։ Քննվեց ժանդարմների համազգեստի և մասնաւոր կանոնագրի հարցերը։—Բ. Դուռը յայտնեց եկղարիին, որ այլևս չէ պահանջելու ուսուցիչների համար երաշխաւորութիւն, բացի նրանցից, որոնք մասնակցել էին ապստամբութեանը։ Սարումիցայում եկեղեցի շինելու թոյլատրութիւն դեռ չէ տրված, չը նայելով Գերասիմ եպիսկոպոսի ստիպողական խնդիրքներին։ Նակօլեց գիւղում ալբանացիներից կազմված թիւրքական զօրքերը բռնաբարութիւններ արին և եկեղեցիները սրբապղծեցին։ Բոլգարների բողոքների և հիւպատոսների նկատողութիւնների պատճառով՝ Հիլմի փաշան նշանակեց մի յանձնաժողով այդ գործը քննելու համար։

ՊՍԿՈՎ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինին կայարանում դիմաւորեցին նահանգապետը, դիվիզիայի հրամանատարը, նահանգապետի օգնականը, գնդապետները և ազնուականների, զեմստվոների և քաղաքի պատգամաւորութիւնները։ Նահանգական ազնուականութեան պապարագլխի պաշտօնակատարը գեներալ ադիւտանտ Կուրոպատկինին օրհնեց Վսեվօլոդի և Գաբրիէլի պատկերով, իսկ ուղրավայի նախագահը՝ Տիմոթէոսի պատկերով։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Դելկասէն կարդաց Նելիդովի նամակը, որի մէջ արտայայտված է ռուս կառավարութեան ջերմ շնորհակալութիւնը «Վարեագ»ի և «Կորէեց»ի ծառայողներին «Պասկալ» կրէյսերի հասցրած օգնութեան համար։

ՆԱՆՏ։ Լրագիրների խմբագիրները վճռեցին ստորագրութիւն բանալ ռուս վիրաւորների համար։

ԲԵՐԼԻՆ։ Փետրվարի 27-ին կայսրը կը գնայ Բրէմէնհաֆէն և նաւով կը մեկնի Միջերկրական ծով։ Նաւը կը հանդիպի Անտվերպէն, Վիգօ, Գիբրալտար, Պօրտ-Մահոն և Նէապոլ, ուր կայսրը կը տեղափոխվի «Հոհէնցօլլերն» նաւը։ Բելգիական թագաւորի հետ տեսակցութիւնը վճռված բան է։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Մուտքը փակելու համար եապօնացիների բերած նաւերի քննութիւնը ցոյց տուեց, որ նրանք բեռնաւորված են եղել ածուխով և նաւթով, մէջտեղը՝ ակնեէկ է, որ դրված են ականներ։ Սանդուղքների վրա գտնվել են էլէքտրական թելեր և մարտկոցներ։ Փետրվարի 13-ին՝ գիշերվայ ժամը 1-ին եապօնական մի քանի ականանաւեր առագաստներով ծպտած մօտեցան, բայց «Ռէտվիզանը» նկատեց նրանց և կրակ բացեց նրանց վրա. բերդի թնդանօթներն օգնեցին նրան։ Կրակը շարունակվեց մինչև առաւօտ, որից յետոյ ականանաւերը հեռացան։ Այսօր առաւօտվանից եապօնական էսկադրան հորիզոնի վրա է. մօտ ժամը 11¼-ին նա աւելի մօտ եկաւ։ Մեր թնդանօթները կրակ բաց արին. եապօնական էսկադրան պատասխանեց։ Ռմբակոծութիւնը տևեց մօտ 40 րոպէ առանց նկատելի արդիւնքի. մի քանի ռումբներ ընկան քաղաքի մէջը, բայց առանց վնասի։ Սպասվում է, որ ափը զօրք կիջեցնեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 13-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհիներ Մարիա Ֆէոդորովնան և Ալէքսանդրա Ֆէոդորովնան ու Մեծ Իշխան Թագաժառանգը այցելեցին Պետրո-Պաւլեան մայր եկեղեցին, իսկ յետոյ գնացին Փրկչի մատուռը, ուր համբուրեցին հրաշագործ Անձեռագործ Պատկերը։

14 փետրվարի

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 13 փետրվարի։ (Սեփական թղթակցից)։ Եապօնական ականանաւերի յարձակումը դէպի լոյս 12 փետրվարի՝ մեզ համար բոլորովին ապահով անցաւ։ Թշնամին կորուստ ունեցաւ։ Հաստատված է, որ մարտկոցի աջող հարուածից առաջացաւ կաթսայի պայթիւնը եապօնական մի ականանաւի վրա։ Փետրվարի 12-ի գործի մանրամասնութիւնները. «Առաւօտեան եապօնական նաւատորմը, բաղկացած 6 նաւախմբային զրահակիրներից և 4 կրէյսէրներից՝ երևեցան հորիզոնում։ «Ասկոլդ», «Բայան» և «Նովիկ» կրէյսէրները գտնվում էին արտաքին նաւակայանում։ Եապօնական ականանաւերը 30—35 ճոպան [1]) տարածութեամբ մօտենալով նրանց՝ յարձակում գործեցին։ Եապօնական կրէյսէրները զրահակիրներից ջոկվելով՝ առաջը կտրեցին երկու ռուս ականանաւերի, որոնք գալիս էին Գօլուբինայա ծովախորշից։ Ականանաւերից մէկը թշնամու կրակի միջով ճեղքեց անցաւ և թաղվեց նաւահանգստում, իսկ միւսը վերադարձաւ նոյն ծովախորշը։ Ժամի 10 և 45 րոպէին սկսվեց աշխոյժ թնդանօթաձգութիւն եապօնական զրահակիրների և մեր կրէյսէրների մէջ, որոնց աջակցում էին մարտկոցները։ Ժամի 12-ին և 5 րոպէին այն կրէյսէրները, որոնք հալածում էին մեր ականանաւը՝ կարճատև թնդանօթաձգութիւն ունեցան մեր մարտկոցների հետ։ Այս ընդհարման միջոցին պարզ երևաց եապօնացիների թուլութիւնը ծովային շարժողութիւնների մէջ. դէպի ծովը ուղղվելիս՝ զրահակիրները խմբվեցին մի տեղում. սրանից օգտվեցին մեր նաւերը. պարզ երևում էր, ինչպէս մեր ռումբերը պայթում էին թշնամիների նաւերի այս խառնուրդի մէջ։ Սպիտակ ամբարտակ մարտկոցի տակ ծովը ափ է դուրս ձգել մի ականանաւ, որ, ինչպէս կարծում են, պատկանել է հրկիզող նաւերի խմբին, որ աջողութեամբ ընկղմվեցին գիշերը դէպի լոյս փետրվարի 11։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 13 փետրվարի։ (Սեփ. թղթակցից)։ Այսօր ժամի 12-ին եապօնական նաւատորմը, մօտ 17 նաւից բաղկացած, նորից մօտեցաւ Պօրտ-Արտուրին և սկսեց ռմբակոծել ամրութիւնները։ Բերդը պատասխանում էր ճիշդ հարուածներով։ Թշնամու 4 կրէյսէրները ջոկվեցին և ուղղվեցին դէպի Գօլուբինայա ծովախորշը, որը և սկսեցին ռմբակոծել։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ, 13 փետրվարի։ (Սեփ. թղթակցից)։ «Новый Край»-ին հաղորդում են Տօկիօից Զիֆուի վրայով, թէ եապօնական դեսպանը Սէուլում պահանջեց, որ կօրէական կայսերական տունը դուրս գայ ֆրանսիական դեսպանութիւնից։ Տեանձինի «Տայմս»-ը, խօսելով եապօնացիների ցոյցերի և Պօրտ-Արտուրի վրա յարձակման մասին, յիշեցնում է առածը, թէ ամեն բանի վերջն է գովելի։ Այստեղի բռունցքամարտիկների պարագլուխը, Զու ներքինին, գլխատված է։ Զիան և Մա գեներալները մտադիր են Զինաստանի չեզոքութեան դէմ գործել։ Տեղական լրագիրները հաղորդում են, որ Իանշիկայ և Տիէլեան գաղտնի զեկուցագրեր յանձնեցին կառավարութեանը այն մասին, թէ անհրաժեշտ է պաշտպանողական-յարձակողական դաշնակցութիւն կապել։ «Կուրիէր դը Տեանձին» հաղորդում է, թէ եապօնացիները հիասթափված են, որովհետև նրանց գործակալները, թւով 200 հոգի, որոնք իբրև թէ ուղարկված էին երկաթուղին պայթեցնելու՝ ոչինչ չը կարողացան անել։ Փետրվարի 12-ի գիշերը եապօնական ականանաւերը նաւատորմի մասնակցութեամբ աշխատեցին մօտենալ Պօրտ-Արտուրին, բայց յետ մղվեցին բերդի թնդանօթներից։ Պատմում են, թէ երկու ականակիրներ, որոնք իբրև եղերային մակոյկներ գնում էին առագաստներով՝ ընկղմված են։ Մանրամասնութիւններ չը կան։

Փոխարքայի ամենահպատակ հեռագիրը Նորին Մեծութեան փետրվարի 13-ից։ «Թշնամու նաւախումբը, բաղկացած 16 նաւից, Դալնիի կողմից մօտեցաւ Պօրտ-Արտուրին փետրվարի 12-ին, առաւօտեան մօտ 11 ժամին և սկսեց ռմբակոծել արտաքին նաւակայանում կանգնած «Ասկոլդ», «Բայան» և «Նովիկ» կրէյսերներն ու բերդը։ Կրակը տևեց կէս ժամ, և ապա մեր կրէյսէրները եկան նաւահանգիստը։ Թշնամին մի քանի րոպէ ռմբակոծելով մարտկոցներից մէկը՝ սկսեց հեռանալ, բայց առանց բերդի տեսութիւնից դուրս գալու, միայն հարուածներից դուրս։ Այս ժամանակ թշնամու չորս կրէյսեր ջոկվեցին և մտան Գօլուբինայա ծովախորշը, որտեղ շուտով կրակ բացին այնտեղ թաղված մեր ականանաւի վրա և սաստիկ հարուածեցին ափը, որից յետոյ կօմենդանտը զօրք ուղարկեց այնտեղ։ Գօլուբինայա ծովախորշում թնդանօթաձգութիւնը շարունակվեց 20 րոպէ։ Ափը զօրք չիջեցրվեց։ Թշնամու կրէյսերները հեռացան։ Համապատասխան միջոցներ են ձեռք առնված՝ դիմադրելու համար թշնամու կողմից հնարաւոր ծովային հնարքներին։ Այդ օրն մեր կո-

[1]) Ճոպան=կարէլաօվ=նաւի փոքր խարիսխի թոկն է. իբրև տարածութեան ծովային չափ՝ հաւասար է 100 սաժէնի։

բուստն եղաւ—մի վիրաւոր՝ բատարէյի մօտ։ Այդ մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Մեծութեան։

Փոխարքայի հեռագիրը Նորին Մեծութեան փետրվարի 13-ից. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեան, թէ փետրվարի 11-ին ցերեկով Պօրտ-Արտուրի ժամերը կանգնած էին 17 պատերազմական նաւեր, 12 ականանաւ և շոգենաւեր, սակայն առանց հարուածների գծի մէջ մտնելու։ Այդ օրը ծով դուրս եկան «Բաեան», «Ասկոլդ» և «Նովիկ» կրէյսէրները։ Ամենից վերջը Պօրտ-Արտուր վերադարձան մեր ականանաւերը Գոլուդանու ծովախորշից։ Երեկոյեան կրէյսէրները դուրս եկան դէպի ծովը և գիշերը մոտն նաւահանգիստը։ Փետրվարի 12-ին ծովը դուրս եկան մեր ականանաւերը։ Գիշերը նաւակայանում նորից երևեցան եապոնական ականանաւերը, որոնց վրա կրակ բացին «Բեռվիզանը» և մարտկոցները։ № 18 մարդկոցը յայտնում է, թէ ընկղմել է թշնամու մի ականանաւ։ Առաւօտեան 9 ժամին հօրիզոնի վրա երևաց եապոնական նաւախումբ, 14 նաւից բաղկացած։ Փետրվարի 11-ի գիշերային յարձակման ժամանակ ընկղմված թշնամու նաւերի վրա գտնված են Պօրտ-Արտուրի, Ադամսի և Դեղին ծովի քարտէզները։ Այրվող շոգենաւերից մէկի վրա նկատված են հաղորդիչներ և մարտկոցներ։ Հաղորդիչները կտրված են, իսկ շոգենաւի հրդեհը հանգցրած։

14 փետրվարի

ՍՕՖԻԱ։ (Կօրրեսպ. բիւրօ). Իշխանի նախաձեռնութեամբ հիմնված է կոմիտէտ մինիստր-նախագահի կնոջ նախագահութեամբ՝ ռուսական վիրաւոր զինուորներին օգնութիւն հասցնելու համար։

ԲԵԼԳՐԱԴ։ «Белградске Новине» լրագիրը հաղորդում է հաստատ աղբիւրներից, որ այս օրերս կը վերջանայ դիպլոմատիական ընդհարումը և օտար ներկայացուցիչները շուտով կը վերադառնան Բելգրադ։

ՍՕՖԻԱ։ (Կօրրեսպ. բիւրօ)։ Դիպլոմատիական շրջաններում ասում են, որ կառավարութիւնը յանձնել է Նաչեվիչին Բ. Դրան հետ բանակցութեան մտնել երկու պետութիւնների պահանջները որոշող գրաւոր համաձայնութեան տուէթով։ Այդ պահանջները հիմք են ծառայելու Թիւրքիայի և Բոլգարիայի փոխադարձ պարտաւորեցման խաղաղութիւնը պահպանելու և ըէֆօրմների իրականացման չը խանգարելու համար։

ԿԻՇԻՆԵՎ։ Դատաստանական պալատը սկսեց այս նստաշրջանի վերջին գործը Բուսնակի և հակահրէական անկարգութիւնների մէջ միւս մեղադրվողների մասին։ Գործը քննվում է փակ դռներով։

ԺԻՏՕՄԻՐ։ Լեհական հասարակութիւնը, աբսենտեան սիբիրեան ինները գնդի երրորդ բատալիոնին ուղեկցելով կայարան, առաջարկեց հետևեալ կենացը. «Ուղեկցելով մեր եղբայրակիցներին Հեռաւոր Արևելք, ցանկանում ենք ռուսական զէնքին լիակատար աջողութիւն։ Կեցցէ սլաւոնութիւնը»։ Ճառը ծածկվեց անվերջ «ուռա»-ով և հիմնով, որ երգում էին մինչև գնացքի մեկնելը։

ՊԱՐԻԶ։ Դելկասէն և սպանիական դեսպանը ստորագրեցին միջնորդ դատարանի մասին դաշնադիրը, որ նման է Ֆրանսիայի և Անգլիայի Սպանիայի հետ կնքած համաձայնութեան։

ԿԻԼ։ Կիլի կայսերական ջրանցքի վարչութեանը ոչինչ յայտնի չէ Վիլհելմ կայսրի ջրանցքի փակման մասին՝ ռուսական և եապոնական նաւերի համար, այդ պատճառով մի քանի լրագիրների հաղորդած տեղեկութիւնները այդ ջրանցքի փակման մասին հաղիւ թէ արդարացի լինի։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Փետրվարի 13։ (Ռէյտ. գործ)։ Բուդվէյտ նախագահը ստորագրեց այն յայտարարութիւնը, որը աւետում է, թէ Պանամայի ջրանցքի դաշնագիրը մտնում է իր ուժի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրքիայի զինուորական մեծ պատրաստութիւնների, ինչպէս և մոբիլիզացիայի և փոքրասիական բէդիֆների դիվիզիաների Եւրոպա ուղարկելու լուրերը հիմքից զուրկ են։

Կ. ՊՕԼԻՍ։ (Կօրրեսպ. բիւրօ)։ Դիակովոի շրջաններում կենտրոնացած զօրքերը զբաղված են ալբանական շարժումի ճնշմամբ։ Մի քանի ալբանական առաջնորդների բնակարանները՝ ինչպէս ասում են՝ կաւերվեն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պետական քարտուղար Գէյը և Պանամայի հանրապետութեան լիազօրը փոխանակեցին Պանամայի ջրանցքին վերաբերեալ դաշնագրի վաւերագրերը։

—

Առեւտրական-հեռագրական գործակալութիւնից

13 փետրվարի

—

ԼՕՆԴՕՆ։ «Daily Chronicle» լուրերի համեմատ հաղորդում է, որ Կօրէյական կառավարութիւնը փոխեց քաղաքականութիւնը եապօնացիների վերաբերմամբ։ Փոփոխութիւնը առաջացել է եապօնական աջողութիւնների վրա կասկածելու և ռուսական առաջաւոր զօրամասերի երևալու պատճառով։

—Շանղհայից հաղորդում են, որ Եապօնիան հիմնեց Կօրէյական փոխարքայութիւն, Տօգուկավին նշանակելով փոխարքայ։ Կօրէյական կայսրը դիտաւորութիւն ունի հեռանալ երկրից։

—«Daily Mail» լրագիրը հաղորդում է, որ Նիւ-Զվանգ եկաւ գնդապետ Մունտէր, Իւանշիկայի շտաբի հրամանատարը, որը յատուկ միսսիայով գնում է փոխարքայ Ալէքսէեվի մօտ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Դր. Տէր-Գրիգորեանց
Վերադարձաւ արտասահմանից և նորից ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825. (ամեն օ.) 3—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։
18—100

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, փետրվարի 15-ին, ժամի 12½-ին նշանակված է Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում երրորդ և վերջին անգամ ծխականների ժողով։ Եթէ այս անգամն էլ չը կայանայ ժողովը, ստիպված կը լինեմ 1903 թ. հաշիւը և 1904 թ. նախահաշիւը ներկայացնելու Կոնսիստորիային ի տնօրէնութիւն, առանց սովորական ծխականների քննութեան։
2—2 (գ. կ.) Երէցփոխ՝ ինժ. Ն. Գրիգորեան

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեռ Վանքի փողոց, տուն Կուզանովի, Բախչիեվի դեղատան կից։

ԲԺԻՇԿ ՂԱԶԱՆՃԵԱՆՑԸ
Տեղափոխվելով Կարս, ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչև 1-ը, երեկոյեան 6—7 ժ., առանձնապէս սիֆիլիս և վեներական հիւանդ. 5—6 ժ.
Միխայլովսկայա փողոց, տուն Մակիեվի։ 5—10

Բացված է պատկերազարդ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ
XI եւ XII-րդ գրքերի բաժանորդագրութիւնը։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲ.
Նախկին տասը գրքերը ի միասին արժէն՝ խմբագրութեան մէջ՝ 15 ռուբլի, մի գիրքը 2 ռուբլի. երկուս և աւելին՝ իւրաքանչիւրը 1 ր. 50 կոպ., ա. գիրքը՝ 3 ռուբլի։
Դիմել. Ерванду Лалаянцъ. Тифлисъ, Семинарія Нерсисянъ կամ Саперная 5.
(Կ. երեքշ. հ.) 11—12

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ
Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրոֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։
Հասցէն Wien, Spiegelgasse, 3, IV stock.
9—50

Պ. Աւսարկիսովի պարտիզպանական հիմնարկութիւնը ծախում է և արտասահմանեան և տեղական պտղատու ծառերի բոլոր տեսակները շատ չափաւոր գներով։ Հասցէն՝ станція Скра, Закавказ. Желѣзн. дороги,—Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի։
(Կ. ո.) 5—10

Ծախվում է մի տուն
մի յարկանի, Ֆլիգելով։ Օլգինսկի փողոց № 48. Հարցնել տանտիրոջը, բակի մէջ։ 1—1

L'HIRONDELLE—ԾԻԾԵՌՆԱԿ
Հայերէն և ֆրանսերէն բառերով։ Թարգմ. Ն. Լալայեանցի, ձայնագր. Ն. Նիկոլաեվի։ Գինն է 30 կ.։ Ծախվում է բոլոր երաժշտական խանութներում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել Կենտրոնական և Կովկասեան գրախանութները, որտեղ գումարով առնողներին նշանաւոր զիջումներ կը լինի։ (ռ. կ. հ) 2—3

Իսկական ցելիւլոէր Բաղդադեան տեսակի
ԹԵՐԱՍԻ ՍԵՐՄ
ԵՂԲԱՅՐՆԵՐ ՊԱՄԽԱԼԻԴԻՒ
Իւրաքանչիւր արկղիկը 6 մախաղից։
Միակ ներկայացուցիչը
ԿՈՎԿԱՍՈՒՄ
Ա. Կ. ԶԱԽԱՐԻԱԴԻՍ
Ընդունում է նոյնպէս պատուէրներ մինչև ապրիլի 15-ը եկող տարվայ համար։
Հասցէն. Тифлисъ, Дворцовая ул., д. Сарадженова, квартира № 6. (հ. կ.) 8—10

Տպագրութեան համար արդէն պատրաստած լինելով մի լիակատար հայերէն ԵՐԳԱՐԱՆ, բայց ցանկանալով առաւել կատարեալ դարձնելու, խոնարհաբար խնդրում եմ այն բոլոր անձանց, որոնք ձեռնհաս են և կամ ժողոված ունեն երգեր, պարերգեր, նամանաւանդ ժողովրդական բանաստեղծութիւններ և երգեր, բարեհաճեն ուղարկել ինձ հետևեալ հասցէով. Баку, Араму Аракелянцу. Въ книжный магазинъ С. Д. Арутюнова. (հ. հ. կ.) 6—6

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ աշխատութիւններից
«Սասուն» Աշխարհագրական քարտէզով, երկրորդ տպագրութիւն, գինն է 20 կ.։
«Պատրիկեանի նամակները»—60 կ.։
«Հարևաններ», «Մինասի եղը», «Եղիտ աղջիկը», «Ծանր քարը», «Մեր ինչը կը պակսի»։ «Նուազած կեանքը» («ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ») գինն է 30 կ.։
«Մանրանկարներ» երկու հատոր—1 ր. 50 կ. հատ թղթի վրա 2 ր.
Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ» (Дворцовая), Г. Галустяну. 8—10

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1904 թ.
ՄՈՒՐՃ
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ
(Նոր շրջան IV տարի)
Խմբագրութեան հէ աշխատակիցների նոյն կազմով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստանում՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսուան 1 ր.։ Արտասահման՝ տարեկան 12 ր. (32 ֆ. կէս տարին 7 ր. (18 ֆ.), 1 ամսուան 1 ր. 20 կ. (4½)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատունը (ձամբամաճեան փողոց, տ. № 16։
Մոսկվայում—տիկին Վառվառէ Քանանեանի մօտ (Сухеревск. площ. соб, д.).
Կայսրութեան այլ տեղերից դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «Мурчъ».
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
Եւրոպա—պ. Յակոբ Ղազասէր, Zurich (Suisse), Weinbergstr. 103, Hagop Aghasser։ Պարսկաստան—Թեհրանի հայոց դպրոցների տեսուչ պ. Լևոն Բարայեան։ Եգիպտոս—Դօկտոր Կ. Փաշայեան խան, Ալէքսանդրիա.

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յուլիսի 1-ին 2 ր.—կամ՝ սկզբում 5 ր. և յուլիսի 1-ին 5 ռուբլի։ Դրամանշաններից մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունվում։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են—1 երես բռնող յայտարարութեան համար 15 ր., ½ եր.—8 ր., ¼ եր.—4 ր.։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ՆՈՐՈՒԹԻՒՆ! ՕԾԱՆԵԼԻՔ
„VIOLETTE MUSQUÉE."
Հաճելի և երկարատև հոտ.
3—6 օ. 15, հ. 15, դ. 15, յ. 15, մ. 15, ա. 15. (Метцель) 148—180

ԱՓԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
„ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ԸՆԿ."
ԲԱԳՈՒ
Իր սեփական պահեստներում մշտապէս ունի
Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկողանի երկաթէ դարձաններ, ջրհան մեքենաներ «Գամերոն» և «Դուպլէքս», ռուսական գաղային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, ֆիտինգներ և այլն։ Դուրգեր զանազան տեսակի (станки токарные, сверлилные, строгальные и др.)։ Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ։ Պողպատ՝ գուրեր, կտրոցներ և գործիքներ շինելու համար։ Մեռաղեայ փոկեր, ազիս տնեայ (согнеупорный), «Գլինրոյդ» և կաւ, բեռներ (заклепки котельныя, пистонныя)։ Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղնձէ թերթաւոր և կտորներով, պղնձէ խողովակներ, թուղթ ասֆալտած (асфалтированная) խողովակներ ջրուղիների համար և դրանց զօդաւորող մասեր։ Ենագ ձօղաւոր, արմնձ թերթաւոր և կտորներով, զինկ թերթաւոր և այլն։ Պարագաներ (арматура) պղնձեայ, բրոնզեայ և ձուլածոյ։ Գործիքներ զանազան տեսակի, բեռներ առարկաներ, ցեմենտ. նամանաւանդ տեխնիքական ամեն տեսակի մեռաղներ և իրեր։

Ներկայացուցիչ է
ՐՈՒՍՏՈՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.
Շոգեմեքենաներ
Կերօսինեայ } շարժիչ մեքենաներ
Նաւթեայ }
Շոգեատրներ (локомобилы)
Արգուլներ (катки для шоссе)
ՐԻՖԱՐԴ ՄԱՅԵՐ
Ներկեր զանազան տեսակի
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչը
Խողովակներ առանց կարի, գազեայ, նաւթատարների, ծխնիներուլի և ջրաշխական։ Նամանաւանդ և սեղմակուռ խողովակներ խատուցիչների համար (компрессоръ)։
Կայմեր (мачты) անկար խողովակներից, էլեկտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար, սիներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար։
Ներկայացուցիչ է նամանաւանդ «Գանակէ» «Էմիլ Լիպզորտ և ընկ.» և ուրիշ ընկերութիւնների ու հաստատութիւնների։

Ընդունում է լիովին կառուցումն տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նամանաւանդ ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ։
Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս։
Արժէքների ցուցակները ուղարկվում են ձրիաբար։ (կ. 1 ան.)

Дозволено Цензурою. Тифлисъ, 14-го февраля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С.Назарянца, Мих. пр. № 81.